ԱՐՑԱԽԻ ԻՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

2. ՀՈՂԸ ՏԱԼ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

Այժմ Խծաբերդի զուտ ներքին սոցիալ-տնտեսական պրոբլեմների մասին, այն մասին, թե ինչ օրի է հասցրել գյուղին նրա կոլտնտեսությունը: Գյուղի ընդհանուր հողատարածության (5400 հեկտար) կեսը գյուղատնտեսական հանդակներ են և անտառ: Այն էլ ի՜նչ անտառ: Խծաբերդցիների խոստովանությամբ, նրա հարստությունից օգտվողը կարող է շուրջտարին ապրել առանց աշխատելու: 1200 հեկտար գյուղատնտեսական հողատեսքերի մեծ մասը (ավելի քան 750 հեկտար) արոտներ են, 160-ը՝ խոտհարք: Ժամանակին գյուղը 800 հեկտար վարելահող է ունեցել, որից հացահատիկի և այլ կուլտուրաների լավ բերք է ստացել: Սակայն տարիների ընթացքում այդ արժեքավոր հողերի մեծ մասը լցվել է, ծածկվել թփուտներով ու ծառերով, մնացել է 307 հեկտար մեքենահարմար վարելահող: Թեև մնացածի հաշվին ավելացել են արոտները, սակայն զարմանալի է, որ հանրային տնտեսությունն արդեն 10 տարուց ավելի ոչ մի գլուխ ոչխար չի պահում, չի պահում զարմանալի պատճառաբանությամբ՝ իբր, ոչխարաբուծությունը վնասով է աշխատում: Ընթերցողն ինձ թող հավատա առանց ավելորդ թվաբանության. այդ պնդումը և ոչ մի «տնտեսագիտության» հետ չի համակերպվում: Եվ, իսկապես, լավագույն արոտավայրերը, որ տրամադրվում են անասունների արածեցման տարվա 8—9 ամիսների ընթացքում, չեն կարող վնաս բերել տնտեսությանը: Բացառությամբ մի դեպքի, այն է՝ *բացարձակ անտերության դեպքի...*

Եվ այսպես, Խծաբերդի հարուստ արոտներն այսօր փաստորեն նույնպես լքված են ու անտեր, եթե չհաշվենք մի քանի հարյուր գլուխ անասուն ունեցող անհատներին:

Ահա անտնտեսվարության մեկ ուրիշ օրինակ. ջրի հարուստ պաշարներ ունի Խծաբերդը, բայց հարյուրավոր հեկտար լքված ու գործող վարելահողերից այսօր ոռոգվում է հազիվ 25-ը: Դարձյալ անտերություն, դարձյալ վտանգ: Ջուրն անտեղի հոսում է դեպի հարևանները, որոնք, եթե այսօր չէ, ապա վաղը կօգտագործեն և քեզ էլ կզգուշացնեն, որ չխանգարես հանկարծ:

Իսկ թե ինչպիսին է տնտեսության աշխատողների վարձատրությունը, ամոթ է ասել. ընդամենը մեկ ռուբլի՝ վաստակած յուրաքանչյուր աշխօրի դիմաց: Ավելի շուտ խորհրդանշական, քան իրական վարձատրություն: Ասածին, թերևս, մնում է ավելացնել գյուղի միջնադարյան անբարեկարգ փողոցները, կուլտուր-կենցաղային ծառայությունների գրեթե իսպառ բացակայությունը, ինչպես նաև շրջկենտրոն տանող ճանապարհի անմխիթար վիճակը, և գյուղի պատկերը ավելի լրիվ կդառնա:

Ահա թե ուր հասցրեց գյուղը և գյուղացուն կոլտնտեսային համակարգը իր գոյության 60 տարիների ընթացքում, որն սկսվեց գյուղի համատարած և բռնի կոլեկտիվացումից, գյուղացու բռնի հողազրկումից *և իր հետ բերեց հայ գյուղացուն խորթ անտնտեսվարություն և անտարբերություն հողի և բնության մյուս հարստությունների օգտագործման նկատմամբ, մանավանդ դրանք համատարած անտերության:*

Խծաբերդի տնտեսության ցուցանիշներին ծանոթանալուց հետո հարցրեցի նրա ղեկավարներին.

— Չե՞ք ուզում հողը բաժանել գյուղացիներին կապալով, վարձակալությամբ կամ այլ սկզբունքով:

Պատասխանը դարձյալ զարմանալի էր.

— Մենք ուզում ենք, բայց գյուղացիները չեն ուզում...

Դարձյալ հանելուկային դեպք. ո՞վ կհավատա, որ հայ գյուղացին հող չի ուզում: Այդ հանելուկը, ինչպես գիտեն շատ թե քիչ լավատեղյակ մարդիկ, երկու բացատրություն ունի. կա՛մ գյուղացին չի հավատում հող տվողին՝ պետությանը, (չէ՞ որ նույն պետությունը 1918 թ. հողը տվեց, իսկ 10 տարի անց հետ վերցրեց), կա՛մ էլ հողը տալիս են նրան այնպիսի պայմանով ու ձևով, որ պարզապես ձեռնտու չէ վերցնել:

Հայաստանցի հայը կարող է զարմանալ. մի՞թե Արցախում էլ կարելի է այդպես վարվել գյուղացու հետ: Էլ ինչի՞ համար պետք է պայքարի արցախցին, եթե ոչ առաջին հերթին իր տան, հողի և ջրի: Մինչդեռ հող ստանալու ճանապարհին կանգնած է մի հզոր ուժ, որի անունն է պետական-ագրարային բյուրոկրատիա, որը, հողը տալու դիմաց, որոշակի ակընկալիքներ ունի և պետք է իրագործի ուղղակի կամ անուղղակի, բացահայտ կամ անսքող ձևերով: Թող, ուրեմն, չմոլորվի հայաստանցի հայը. Արցախի բյուրոկրատիան նույն նկարագիրն ունի, ինչ-որ՝ մայր-հայրենիքինը: Եվ չհիասթափվի, քանի որ եթե բյուրոկրատիան հնարավոր չէ հաղթահարել և ոչ մի հայրենասիրական քարոզչությամբ, ապա դա անել հնարավոր է կողմերի *տնտեսական շահերի ճշգրիտ ընկալման և հաշվառման միջոցով, լավ մշակված տնտեսական մեխանիզմի միջոցով:*

Եվ այսպես՝ ի՞նչն է խանգարում, որ հողը տրվի գյուղացուն: Առօրյա այն ակնհայտ պատասխանը, թե խանգարում են տեղական իշխանությունները, տեղական «հարազատ» բյուրոկրատիան, հիմնականում ճշմարիտ է, սակայն բնավ ոչ լիարժեք, քանի որ չի խորանում խնդրի էության մեջ: *Իսկ այն ձևավորվում է վերևից:*

Երբ այս հարցերի մասին խոսում էի Հադրութի շրջանի ղեկավարության հետ, կուսշրջկոմի քարտուղար Ի. Սաֆարյանն ասաց.

— Խանգարում է պետական պատվերը:

Բացատրեմ: Հանրայնացված գյուղատնտեսության 60 տարիների ընթացքում անխափան գործել է գյուղատնտեսական արտադրանքի պետական պարտադիր մթերումների (գնումների) հատուկ, «երկաթե» համակարգը, որի միջոցով պետությունը վերցրել է գյուղից իր ուզած արտադրանքը, իր ուզած գնով և... սնանկացրել գյուղերն ու գյուղատնտեսությունը: Երկար ու ձիգ տասնամյակների ընթացքում մթերումների այդ հարկադիր մեխանիզմը մշակվել է և իջեցվել-հրահանգվել վերևից ներքև: Գործել են զորանոցային սոցիալիզմի, իսկ ավելի ստույգ՝ ռազմական կոմունիզմի հայտնի օրենքները: Եվ գործում են մինչ այսօր, սակայն քողարկված. «վերակառուցման ոգով» վերափոխվել է մեխանիզմը և ընդունել պետական պատվերի ձև:

Ինչպես հայտնի է կենցաղային առօրյայից, նաև քաղաքակիրթ երկրների փորձից, պատվեր տալն ու ընդունելը հիմնված է կամավորության, իրավահավասարության և փոխշահավետության սկզբունքների վրա: *Մինչդեռ մեզանում պետական պատվերը ոչ թե պայմանագրային, այլ, ըստ էության, հարկադրական բնույթ է կրում,* իսկ դա, ինքնին, կասկածի տակ է դնում նաև նրա փոխշահավետությունը: Եթե փոխշահավետ լիներ, ապա ո՞վ կխուսափեր այդպիսի պատվերից:

Այսպես, թե այնպես, պետական պատվերը, իրոք, մեծապես խանգարում է հանրային հողի բաժանմանը գյուղացիներին վարձակալական կամ այլ սկզբունքով, քանի որ հողը բաժանելուց հետո պետության գործակալները տեղում արդեն դժվարությամբ պետք է գանձեն պատվերով նախատեսված բնամթերքը:

Կյանքը հրամայաբար պահանջում է հրաժարվել պետական մթերումների կամ նրա նորագույն ձևի՝ պետական պատվերի մեխանիզմից և տեղերում ստեղծել այնպիսի մեխանիզմ, որը հիմնըված է շուկայի օրենքների, պայմանագրային-համարժեքային հարաբերությունների վրա, այսինքն՝ տնտեսական դեմոկրատիայի և իրավահավասարության օրենքների վրա:

Ինչ վերաբերում է Արցախին, ապա նրա *ձեռք բերած փաստացի քաղաքական ինքնորոշումը, թերևս, բացառիկ հնարավորություն է ընձեռում ստեղծելու նաև տնտեսական ինքնորոշման մեխանիզմի տարրական օղակները,* կամ, ավելի ճիշտ կլինի ասել, *այս նպատակին ծառայեցնել գոյություն ունեցող տնտեսաձևի օղակները:*

Փորձեմ պարզել միտքս: Արցախի ներկայիս արտակարգ քաղաքական վիճակը թույլ չի տալիս վճռականապես և բացահայտորեն մերժելու և դեն նետելու ոչ հանրային կոլտնտեսային կամ պետտնտեսային վաղուց արդեն վարկաբեկված ձևերը (կենտրոնական բյուրոկրատիան և Բաքվի ազգայնամոլները անմիջապես կաղմկեն. «Տեսեք, հայերը քանդում են սոցիալիստական կարգերը») և ոչ էլ արտադրանքի մթերումների պետական պատվերի համակարգը: Կարելի է չկասկածել, որ հիշյալ տնտեսաձևերը վերջնականապես կվարկաբեկվեն առանց մեր միջամտության: Մինչ այդ պետք է դիմել մի քանի պարզ և պաշտոնապես ճանաչված միջոցների: Դրանցից *առաջինը* կարող է լինել անհատ գյուղական տնտեսություններին տրվող անձնական հողամասերի ընդարձակումը մինչև 0,5 հեկտար, իսկ որոշ անբարենպաստ շրջաններում՝ մինչև 1 հեկտար: Այդ կարգի առաջարկությունն արդեն արվել է մեր կողմից՝ հանրապետության համար և պետք է արագացնել նրա հիման վրա կառավարական որոշման ընդունումը, որից հետո բնական կլինի նրա կիրառումը նաև Արցախում:

Գյուղացիների անձնական (անհատական) տնտեսությունների հողաբաժնի ընդարձակումը հիշյալ չափերով համազոր է նրանց թողարկած արտադրանքի առնվազն կրկնակի ավելացմանը, որը միանգամայն ձեռնտու է գյուղացու և պետության համար:

Երկրորդ միջոցառումը պետք է վերաբերի վնասով աշխատող կոլեկտիվ և պետական տնտեսություններին կամ դրանց առանձին ճյուղերին: Այդ վնասին վերջ տալու նպատակով նման տնտեսությունները կամ ճյուղերը պետք է անհապաղ հանձնվեն գյուղացիներին կամ այլ ցանկացողների՝ երկարաժամկետ վարձակալական հիմունքներով, ազատելով նրանց առնվազն երեք տարի բնամթերային կամ դրամական հարկի վճարումից: Դա միանգամայն բնական է, քանի որ նոր տերերը (վարձակալները) անմիջապես կավելացնեն գյուղարտադրանքի թողարկումը, ազատելով պետությանը անվերադարձ օգնության մշտական բեռից, այսինքն՝ վնասից:

Վերջապես, *երրորդ* միջոցառումը վերաբերում է մյուս բոլոր կոլտնտեսություններին և պետտնտեսություններին: Սրանց համար պահպանվում է պետական պատվերը, սակայն երկու էական վերապահումով. նախ՝ պատվերը սահմանվում է գյուղական համայնքի ցանկությամբ՝ բնամթերային կամ դրամական ձևով, ամրացված յուրաքանչյուր հեկտար հանդակների հաշվով: Եվ երկրորդ պայմանը՝ պատվերի ծավալը կամ գումարը սահմանվում է անփոփոխ առնվազն 5 տարիների համար, ելնելով հողի տնտեսական գնահատականի տվյալներից, իսկ այդ տվյալները Արցախն այսօր ունի:

Այս առաջարկը ոչ այլ ինչ է, եթե ոչ *պարենհարկի սկզբունքի կիրառման առաջարկ,* որը վերջերս որդեգրվել է մեր պաշտոնական ատյաններում, սակայն չի իրականացվում, քանի որ խորթ է կուսակցական-պետական բյուրոկրատիայի մտածելակերպին ու գործելակերպին:

Պետական պատվերի կիրառումը պարենհարկի (կամ դրամական հարկի) սկզբունքով հնարավորություն է ընձեռում գանձել այն ոչ միայն ամբողջ գյուղական համայնքից, այլև յուրաքանչյուր գյուղական անհատական տնտեսությունից և վարձակալից: Այլ կերպ ասած, միանգամայն հնարավոր է այդ սկզբունքի կիրառման պայմաններում համայնական հողի բաժանումը անհատ վարձակալներին, ընտանիքներին, խմբերին և այլն:

Հասկանալի է, որ մեր առաջարկածը անցումային, ժամանակավոր վարձակալական ձև է, որը պետք է ժամանակավորապես «խաղաղ գոյակցի» գյուղմթերումների պետական պատվերի ներկայիս ձևի հետ: Սակայն ավելի գերադասելի է օգտագործել այդ ժամանակավոր և թերի ձևը՝ ժամանակ շահելու, անտերության մատնված հանրային հողը գյուղի աշխատողին տալու համար, քան՝ պարզապես սպասելը: Չէ՞ որ հողի տերն է երկրի տերը:

Ն. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Երևանի ժողտնտեսության
ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի
պրոֆեսոր